Հայ Փոստ
Հայաստանի Փոստ

Ել. – ՀՓ 1611-2026
«01» դեկտեմբեր 2026թ.
ք. Երևան

#քոմարդիկամենք

«ՄՀԵՐ ԲՈՒՌՆՈՒՉՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ
(Հասցե՝ ք. Երևան, Սարի-Թաղ 8-րդ շ. 167տ
Հեռախոս՝ (+374) 99010746
Էլ.հասցե՝ burnuchyan.info@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Համաձայն 2026 թվականի փետրվարի 19-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Միեր Բուռնուչյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքված «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների գունագրաֆիկ ձևավորման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՓ-ԳՀԾՁԲ-26/24 ծածկագրով գնման պայմանագրի՝ (այսուհետ՝ Պայմանագիր) Կատարողը պարտավորվել է իրականացնել Ծառայության/ները: Մատակարարումը Կատարողի կողմից իրականացվում է սույն Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից Ծառայության/ների մատակարարման պատվերը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի կողմից պատվիրված Ծառայության/ների քանակին համապատասխան, ընդ որում առաջին փուլի՝ պատվերի մատակարարման ժամկետը 20 օրացուցային օր է: Ծառայության/ների մատակարարաման համար պատվերը Գնորդի կողմից Կատարողին կատարվում է գրավոր (Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեից Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին պատվերը ուղարկելու միջոցով):

Պատվիրատուի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի պահանջները, մասնավորապես՝ Պայմանագրով սահմանված ծառայությունների իրականացումը չի իրականացվել

Պայմանագրի N 2 հավելվածով (մատակարարման ժամանակացույց) սահմանված ծառայությունների իրականացման ժամանակացույցին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.2-րդ և 2.1.3-րդ կետերի համաձայն, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) իրականացված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատակարարման ժամկետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 Հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի 7.11 կետով սահմանված է, որ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի

էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և

(կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի որակավորման ապահովման գումարը անհրաժեշտ է փոխանցել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված **«1930003703150100»** հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք N ՀՓ-ԳՀԾՁԲ-26/24 ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները փոխանցվեն Պատվիրատուի կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Սույն ծանուցումը gnumner.am կայքում հրապարակելուց և burnuchyan.info@gmail.com էլ. փոստին ծանուցելու հաջորդող օրվանից N ՀՓ-ԳՀԾՁԲ-26/24 ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է լուծված:

«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**